



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻՄԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԻԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻՄԱ ԸԱԲԱԹ 27 ՄԱՐՏ 1871

ԹԻՒ 906

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Փարիզէն հասած լուրերը խիստ ծանր են. քանզի համազգային պատերազմը արդէն սկսած է այս դժբաղդ մայրաքաղաքին մէջ, որ գուցէ տեսարան պիտի ըլլայ սոսկալի արիւնահեղութեան, զոր պերմանացոյց հետ կնքուած հաշտութիւնը թէպէտեւ հեռացոյց, բայց ներքին ապստամբութիւնը յետ կըկոչէ զայն ի կառարեալ կործանումն Գաղղիոյ:

Ապստամբական կառավարութիւնը (լա-Քոմիւն) առանգաբար հրատարակուեցաւ և հաստատուեցաւ փարիզի մէջ ի ձայն բաղրամթիւ թնդանօթաց, չիշխալ կառավարութիւնը քուէարկութեամբ որոշեց թէ ազգային երեսփոխանական ժողովը անվաւեր է, հետեւաբար անոր իշխանութիւնը ընդունելի չէ: Այս դժբաղդ եղելով թիւնները՝ (այսինքն ապստամբական կառավարութեան հաստատութիւնը և երեսփոխանական ժողովը) անվաւեր հրատարակուիլով տեղի ունեցեր են, կըթուի, նաև ի խիստ, ի Մարսիլիա և ի Պորտո: Այդ հաղաքին մէջ ինչպէս նաև Ինքնանացոյց տիրապետութեան ներքեւ գտնուած քանի մը քաղաքացի մէջ՝ ապստամբութեան փորձեր եղեր են, բայց շուտով զսպուել են առանց մեծ արիւնահեղութեան:

Փարիզի բնակչաց մեծագոյն մասը առայժմ ապրումաբական կառավարութեան հետ համամիտ կերեւի. ըսել է որ ապօրինաւորութիւնը կըսիրէ և ազգային օրինաւոր ժողովը ու անորմէ ընտրեալ և հաստատեալ կառավարութիւնը անդործ նստած են և չեն համարձակիր իրենց իշխանութիւնը ի գործ դնելով, բարեկարգութիւնը հաստատել փարիզի մէջ զինու. զուրկութեամբ. այլ կաշխատին յորդորական յայտարարութիւններով մոլորեալ ժողովրդաց և խաբուած զինուորացի սիրտերը շահելու: Ահաւասիկ ազգային երեսփոխանական ժողովը յայտարարութիւնը՝ զոր ուղղած է առ ժողովուրդն և առ զօրաբանակն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Ա. Պոլոյս ամենա. Պատրիարքին կոնդակը՝

(Դարձանակութիւն եւ վերջ): (1)

Մինչև որ Աւետարանի պարզ դասեր սորվիս, մինչև որ քրիստոնէական ընկերակցութեան պարտքներ ծանչնան, մինչև որ մտաւորական տղիւթութեան մութէն ի լոյս գաս, մինչև որ դատարարական իշխանութիւն սիրես և բարոյական լուծին տակ պարանոցիլը խտտութիւն խոնարհի, մինչև քո այն հին բարձրացումութիւն փոխի ի լուսագոյն բարս քաղաքակրթութեան, մինչև հառաչանայ ձայնդ հասնի երկինք. և Տէր քո հասած հունձերուն մշակներ հանի և հայրենի եկեղեցւոյ տաճարին՝ Զօրաբարեւ:

Այսչափ և այսքանին ահա քո վերանորոգութեան պայմաններ. փութա՛ս այլ ևս մի հեղաք. եթէ կուզես քո դարաւոր աղէտներէն ազատիլ, օրինակ ա՛ռ քեզու հետեղ եղիր աշխարհին ամէն յառաջագիւղ աղգաց, որ դար մը առաջ քեզ պէս էին. իսկ այսօր հին տշխարհի մեռելութենէն կենդանացած յառաջ կըթան: Դուրջդ նայ. աղգերն ամէն տաղջնացած անգամալոյժ մի՞ճակն՝ դէպ ի նոր կեանք կըմղեն. դու միայն մնացիր եւ Պրտ պատիկէ աւազանին քով, անշարժ նստած կողկողալին ձայնիւ կըպտղատիս, «Տէր ոչ զոք ունիմ, որ արկանէ զիս յաւաղան»: Այո՛, չկայ աշխարհիս վրայ ոչ ոք քեզ օգնական, ընդունայն յուսով մի՛ սպասիր, դու ինքն ես քո օգնական, ջանք արա՛, շարժի՛ր դէպ ի աւաղան, Տէր քո մօտ կեցած է, ձեռք կըկարկուէ, խօսք տուր թէ կամիս ողջ լինիլ. առանց այս երաշխաւորութեան չիք քեզ բժշկութիւն:

Այլ դու ք լծակէ՛ք՝ եղբարք իմ, հրեշտակք Հայաստանեայց եկեղեցւոյ, շարժեցէ՛ք Եփրատաց յորդ առա-

(1) Տես լրագրոյս ցախընթաց բիւր:

«Ապստամբութիւն մի ընդդէմ ազգային վեհապետութեան՝ այսինքն ամենամեծ ուժիւր ընդդէմ ժողովրդեան մի որ կուզէ ազատ ապրիլ, տեղի ունեցաւ այս օրերս և յաւելցաւ՝ իբրեւ նոր աղէտ մի, այն ամեն տառապանաց վերայ որ կըվշտացնեն զմեր հայրենիքը: Անցաւ և անմիտ անձինք ոմանք՝ մեղ պատահած աղէտից հետեւալ օրը՝ երբոր թշնամին հաղիւ թէ հեռացած էր մեր քանդուած գաղտերէն, չվախցան անկարգութենէ և աւերէ մեծագոյն աղէտներ՝ այսինքն անպատուութիւն բերելու փարիզին վերայ. զոր իբր թէ զայն պաշտպանելու և պատուելու կաշխատին: Եւ արդ արատաւորեցին զայն այնպիսի արիւնահեղութեամբ մի՛ որ ի սրտմտութիւն կըշարժէ մարդկային խղճմանքը, և քաջ գիտեմք որ բոլոր Գաղղիան մեծաւ ցասմամբ կըդատապարտէ այս գարնէն եղելութիւնը: Մի՛ երկնչեք մեր կողմանէ բարոյական տկարութիւն մի՛ որ զներկայ չարիքը պիտի ծանրացընէ յանցաւորաց հետ գաշինքի մոնելով. այլ ընդհակառակն անարատ պիտի պահեմք զաւանդն զոր յանձնեցիք մեզ՝ զձեզ փրկելու և զհայրենիքը կարգաւորելու համար: Այդպիսի վեհապետութեան այս մեծ սկզբունքը ձեր ազատ քուէարկութեամբ ի ձեռս բերած եմք. ձեր երեսփոխաններն եմք և միայն ձեզմէ պատուէրներ կընամք ընդունել: Մեր պարտքն է կառավարել՝ յանուն ձեր, մեր երկրին ամենափոքրիկ մասը, ուստի որչափ ևս առաւել իրաւամբ կըպարտաւորիմք կառավարել զՓարիզ, այս դիւցազնական քաղաքը՝ որ մեր Գաղղիոյ սիրտն է և չիւնար թոյլ տալ որ խռովայող կուսակցութիւն մի երկար ժամանակ տիրէ իւր վերայ:

«Բաղաքացիք և զինուորք, այս պարագայիս մէջ ձեր իրաւանց առաջինն է որ ոտքի տակ կ'առնուի. ուստի ձեզ կըվերաբերի հաստատուն պահել զայն: Ձեր երեսփոխանները համամտութեամբ հրաւեր կըկարգան ձեր քաջութեանը, պահանջելով ի ձեռն որ միաբանութեամբ սեղմուիք այս ժողովոյն չորս կողմը

զան. թո՛ղ կրկին մկրտուի ժողովուրդը ուսման և դաստիարակութեան ջրով. շարժեցէ՛ք ուսուցանելով, սփռելով, տարածելով Աւետարանի ազատարար լոյս եկեղեցւոյ որդւոյ վրայ, որ զրկեալ են, որ հարստահարեալ են. ողբերկեցէ՛ք այդ լքեալ ժողովրդաց սիրտ, որ լի է տրտմութեամբ. յոյս տուք քաջաբերեցէ՛ք, թող երկայնաւիտ լինին, թող հաւատան թէ Աստուած վրէժխնդիր է: Տէր Աստուած իրաւարար դատաւոր է, թէ նա զրկելոյց ազդադակին ձայն կըլսէ: Բայց՝ Սաղմոս, տուէ՛ք ժողովրդաց ձեռք, թող աղթեն Գաթի բերնով: «Մինչև յե՛րբ մեղաւորք, Տէր, մինչև յե՛րբ մեղաւորք պիտի ծեսցին: Զսղովորդք քո՝ Տէր, խոնարհ արարին և զժառանգութիւն քո չարչարեցին: Զայրին և զպանդուկան սպանին, զորքս կոտորեցին և ասացին, ոչ տեսնէ զայս Տէր և ոչ ի միտ առնու: Աստուած Գրիգորի, Աստուած Ներսիսի, Աստուած Խաչակայ և Աստուած մեր սուրբ հայր»: Այս քո աւօթից մըմունջ, քո սրտառուէ հեծե՛ծանք կըշանին երկինք, ժողովուրդ Հայոց, Գրիգոր և Ներսէս քո նուիրական աղօթից բուրվառն են, կըմատուցանեն զայն սատու ծաղկաւորական աթոռին առաջ: Արդարեւ քո տառապանաց օրեր երկարացան, դուն ալ այն գերեզմարեալ Հրէից աղղին պէս մաշեցար օտարութեան Բարկիւնին մէջ և նոյն իսկ հայրենի Նորաւանդին մէջ, կըտեսնաս դու և կըհանգուորժես, որ Թշուառութեան հնոց՝ դատակնիւր կըտապալի: Ուստի նոյն երեք մանուկներու ձայն կըկրկնես եկեղեցւոյդ մէջ. «Եւ արդ նուազեցար մեք քան զամենայն աղգս, և եմք տառապեալ յամենայն երկրի այսօր՝ վասն մեղաց մերոց»:

Տարէ՛ք, մի՛ վհատիք, Աւետարանի հեղ և համրերող որդիք, տոկացէ՛ք պահ մի ևս այդ հրակէզ վշտաց. յառեցէ՛ք ձեր աչք դէպ երկինք, օրհնեցէ՛ք զԱստուած, հրեշտակ Ամենակալին պիտի հասնի ձեզ ի զօրավիգ, երկնից օրհնութեան ցողով պիտի չի՛ջուցանէ այդ բոց, որ բնաւ

որ ձեր դործն է, ձեր պատկերը, ձեր յոյսը և ձեր միակ փրկութիւնը՝:

Ազգային երեսփոխանական ժողովէն հաստատեալ կառավարութիւնը՝ կամ լաւ ևս է ըսել հասարակապետական դործադիր իշխանութիւնն ևս իւր կողմանէ հետեւեալ յայտարարութիւնը հրատարակած է.

«Բնակիչք Փարիզի,

«Կարձեալ կըդիմեմք առ ձեզ, առ ձեր բանականութիւնն և առ ձեր հայրենասիրութիւնն, լի յուսով թէ ականջ պիտի կախեք մեր խօսքերուն: Ձեր մեծ քաղաքը՝ որ չկրնար ապրիլ բայց միայն բարեկարգութեամբ, մեծապէս վերոյնալ է քանի մը թաղեֆու մէջ, և այս թաղերուն խռովութիւնը՝ առանց տարածուելու քաղաքին ուրիշ տեղումները, բաւական է արդիւնէր զվերագարձը աշխատութեան և անդորրութեան: Ամանակէ մը ի վեր չարամիտ անձինք՝ բոլորսիցեաց դէմ դնելու պատճառաւ որ արդէն մեկնած են ձեր պարիսպներէն, մայրաքաղաքին մէկ մասին տէր եղած են, անոր մէջ պատնէշներ կանգնած են, զինուորական հսկողութիւն կընեն այնտեղ և կըբռնադատեն զձեզ նոյն հսկողութեան մասնակցը ըլլալ իրենց հետ՝ հրամանաւ ծածուկ մասնախմբի մը որ կըկարծէ թէ ինքը միակ իրաւունք ունի հրամայելու ազգային պահապան զինուորացի մէկ մասին՝ և այս կերպիւ չուզէր ճանաչել իշխանութիւնը տ՝Օրել զօրապետին որ մեծապէս արժանաւոր է ձեր զուրկ լինելու, և կուզէ կազմել կառավարութիւն մի ընդդէմ վաւերական կառավարութեան որ ընդհանուր քուէարկութեամբ հաստատեալ է:

Այս մարդիկը որոնք արդէն այսչափ չարիք պատճառած են ձեզ, զորս դուք իսկ ցրուեցիք Հոկտեմբերի 31ին, այս մարդիկը այժմ իբր թէ զձեղ պաշտպանել կուզեն, կըսեն, ընդդէմ բոլորսիցեաց, որոնք հաղիւ թէ ձեր պարսպաց մէջ երեսակէ ետեւ մեկնեցան, և այս անկարգութիւնները կըյապաղեցը-

զձեզ չծախէ. Աստուած քո մէջն է, անկէզ և առանց այրման պիտի մնաս Բարբր լեռան զուրկ վառուած մարեանց սէս: Ամեն ազգերէն նուազեալ ես, այո՛, որ երբեմն անթիւ անհամար բարգաւաճեալ էիր, և այսօր ուսն մնացեալ որդիներդ սակաւութիւն են: Բայց մի վախճար թէ կ'սպասիս, կամ չսրահար տարուան քո հինօրեայ յիշատակ պիտի բարձուի Նոյի և Մանայ աշխարհէն և ջնջուի Հայաստան տեւուն: Ոչ, դու Պարթեական հօր, այն ժրալուն մշակին տնկած սիրելի ոյս զին ես, թէպէտ մեծամեծ որթերդ, ընտիր ընտիր ողկոյցներդ քո դրացի թշնամիներ անխնայ քանդեցին ու ճակեցին, այլ մնացորդ դաւակնեցողը զքեզ իբրեւ ճիւղ մի՛ նախախնամող ձեռք դեռ անապական պահած է Արեւելեան դրախտին մէջ, դի Աստուծոյ օրհնութիւն կայ քո վրայ. թո՛ղ աշխարհ զքեզ խոսկանայած կարծէ: Եւ, որ բարկացաւ քեզ և թոյլ տուաւ որ թշնամիք քո պարիսպներ քանկեն, և անցաւորներ յափշտակին. նա դարձեալ խնայելով պիտի պարսպէ զքեզ, անմատչելի մնաս և կրկին քաջաբեր որթերովդ բարգաւաճիս: Ո՛վ չգիտեր թէ դու քրիստոնէական սուրբ կրօնին հաւատաւոր ուն ես, Աւետարանի ժրագործ մշակներ. Թաղեց և Գրիգոր արեւելով պատուաստեցին զքեզ այն ճշմարիտ որթին վրայ որ ձողաբարձ տնկեցաւ Գողգոթայի դարին զլուս, որ խաչին հնձան ճիւղ մարմնացելոյն Աստուծոյ կուտարեք ողկոյդ. ցայտեց վերաւելտ արիւն, կենդանացաւ հողագունդ: Յիսուսի որթն անմահ է, հաւատա՛ մի երկմար. այս անմահ որթին վրայ հաստատուած ուներդ յախտան անմահ պիտի մնան:

Բայց մի մոռնար յիշէ՛ք Աւետարանին սքանազարդ տառի. «Տապար ծառին տակ պատրաստ է՝» եթէ պտուղ չըտաս, եթէ հրէական ցանկապատ ուղեղն պէս խաղողին տեղ փոշ բերես, աւա՛ղ քեզ զի սուր յօդէ մի կայ զքեզ զարմանողին ձեռք, այն ամէն ուս, որ անպտուղ

նեն անոնց կատարելու և անոնք կրկնեն կուղղեն թնդանքներ , որոնք և թէ արձակուելու ըլլան պիտի շանթարեն ձեր տուները , ձեր դաւանները և զձեր իսկ վերջապէս վտանգի մէջ կը ձգեն զհասարակապետութիւնը փոխանակ պաշտպանելու զայն : Այսինքն եթէ զաղղիւցող մտայ մէջ անգամ մի հաստատութիւն հասարակապետութիւնը հարկաւոր բնիկն է անկարգութեան , հասարակապետութիւնը կորուսեալ պիտի լինի . ուստի մի հաւատարմանց և ունկնդիր լեռուք ճշմարտութեան , զոր կատարեալ անկեղծութեամբ կըսեմք ձեզ :

Յետոյ ազգէն հաստատեալ կառավարութիւնը որդէն կրնար վերստին ի ձեռս բերել զլիշեալ թնդանքները որ տեղութեան զողովուած են և որոնք այժմ ձեռք միայն կըսպառնան . կրնար բառնալ ի միջոյ այս ծիծաղական պատկերները որոնք զվաճառականութիւնը միայն կարգելուն և արդարութեան ատենին յանձնել ուճադործները որոնք չեն երկնէր զհամազգային պատերազմը յաջորդեցնել օտարական պատերազմին , բայց կամեցաւ ժամանակ տալ խաբուած ժողովրդեան դատել զիրենք խաբուողներէն , Ասկայն չաքամիսներէ զատուելու համար բարեմիտ անձանց արուած ժամանակը առնուած է ձեր անդորրութեան , ձեր բարեկարգութեան և բոլոր Գաղղից բարեկեցութեան ժամանակէն . վասնորոյ պէտք չէ երկարաջնել զայն անսահման կերպիւ , ինչու որ ցորչափ աւելի բայց այս վիճակը , վաճառականութիւնը արդիւնաւ պիտի լինի , ձեր խանութները անպատ պիտի դառնան , ամեն կողմերէն զաղղ վաճառքի յանձնարարութիւնները ի կախ պիտի մնան . ձեր բազմակները անդորուածեան պիտի դատապարտուին , վարկը (թիպար) պիտի չվերանայի և քրամագլուխները , որոնք կառավարութիւնը հարկաւորութիւն ունի ազատելու համար զԳաղղիան ի ներկայութեան թշնամոյն , պիտի վարանին երեւան չլինու : Ուստի յօդուած ձեր և ձեր քաղաքին , ինչպէս նաև յօդուած Գաղղիոյ , կառավարութիւնը որոշած է իւր պարտքը իրորոք գնել , հետեալոր յանցանքները որոնք իրենց համար կառավարութիւն մի հաստատելու զեցին , արդարութեան օրինաւոր ատենին պիտի յանձնուին , տեղութեան զողովուած թնդանքները զինարանաց մէջ պիտի փոխադրուին և արդարութեան ու բանականութեան այս ստիպողական դործը կատարելու համար կառավարութիւնը ձեր գործակցութեան վերայ դրած է իւր վստահութիւնը : Իսկ բարի քաղաքացիները զատուին շարափաններէն , թող օղնական լինին օրինաւոր իշխանութիւն զինուորաց , փոխանակ զէմքներու անոնց :

Այս պիտի կորէ յորթին , որ տաժամայն ցամաք լով կենդանաւոր կենանքն կըզրկուի . իսկ որ պիտու զիւր մեծ խնամով կըսորէ զայն , որ առաւել պաշտպան լինի : Այս քանի մեծ է մեր երկնաւ որ հօր մարդասիրական դործը , որ Տէր է , այլ իրեւ ծառայող մշակ իւր սիրելի որդւոյն տնկած երկրիցոյ որթատունները կըխնամէ :

Ուստի , ժողովուորը Հայոց , պարտքերն , զի Տէր Աստուած անպարտաւոր աղաքայ հաստատեալ որթերը հիմնովին կըբանդէ և կըբաժնայ աշխարհէս : Այստեղ նորոգելու երկրից առաջ Գաղթին ձայնով Երեմիայի որդով պաշտարար առ Տէր . « Աստուած զօրութեանց , դարձ հայկաց երկրից և անս այս արմայցոյ այսմիկ և դարման տար սմա , զոր տնկաց աջ քո , յիշեալ Տէր , որ ինչ անցք անցին ընդ մեզ , նայեաց և տես զՊալատինս միւր , ժառանգութիւն մեր ի դատն նոգեհոյութիւն . աղքատացաք , կարտայաք Տէր , զձուր մեր գնաց արքաք և հաց մեր դառնութեամբ ճաշակեցինք , հալածական եղևաք և յամեն ուրեք թափառեցաք և ոչ գտաք հանգիստ : Լքան յուրախութեան սիրտք մեր , և դարձան ի սուգ օրհնութիւնք պարտեց մերոյ , անկաւ պատին ի զլիսոյ մերոյ , վայ մեզ , վայ մեզ , զի մեղաք : Այսան այսորիկ տուաւ մեզ սիրտ ցաւագին , վասն այսորիկ խաւարեցան աչք մեր ի վերայ լերինն Սիօնի , զի դարձաւ յապաղանութիւն և աղուէք մեզ և ել առնէին ի պաշտ նորա : Եւ զու , Տէր , յախտեան կաս և Սթու քո յաղգ մնչ , չե յաղգ , ընդէն մինչև իսպառ մոռացար զմեզ , հարեք թողեք և լքեցէ՛ք զմեզ մինչ յերկար ժամանակ : Գարձո զմեզ Տէր , և դարձցուք , նորոգեալ զմեզ Տէր իրեւ զատուրան զառաջնս , միթէ մերեմը մերեմը զմեզ զի բարկացաւ սրտմտութիւն քո մինչ իսպառ » :

Այսպէս կողբար ու կըպաղատէր Երեմիաս Հին Երուսաղէմէն համար , այսպէս պէտք է նստինք ու ողբանք

իրենց այս ընթացքով պիտի փութացնեն զվերադարձը բարեկեցութեան փարիզի մէջ և ծառայութիւն մատուցած պիտի ըլլան նոյն իսկ հասարակապետութեան զոր անկարգութիւնը կործանելու վերայ է զաղղիւցող մտայ մէջ :

« Փարիզիք , այս օրինակ կըխօսիմք ձեզ վասնզի կը ճանաչեմք և կըյարգեմք ձեր բանականութիւնը , ձեր խոհեմութիւնը և ձեր հայրենասիրութիւնը . բայց այս աղբարարութիւնը ընելէ ետեւ , հաւանութիւն պիտի տաք անշուշտ որ զինուորական զօրութեան գիմմք , վասնզի պէտք է անպառաճառ և առանց օր մի անցնելու , որ բարեկարգութիւնը ձեր բարեկեցութեան պայմանը , վերահաստատութիւն կատարելագէս , անմիջապէս և անփոփոխելի կերպիւ » :

Այնչեւ ազգային երեսփոխանական ժողովը և անորմէ օրինաւորապէս հաստատեալ գործադիր իշխանութիւնը այսպիսի յորդորական յայտարարութիւններ հրատարակելու կըբանդին , ապաւանդաց կուսակցութիւնը հետզհետէ ամեն կերպիւ զօրանալով , ապա օրինաւոր կառավարութիւնը կըտիրէ այժմ փարիզի ուր կըյոթին կոչուած զլիսաւոր զործին կանգնած է և կայսերութեան կամ թագաւորութեան կո սակից կարծուած անձանց զլուրը կարելիութեայ առանց դատաւորն :

Ահա այս է այժմ փարիզ մայրաքաղաքին սոսկալի վիճակը , և մոլորեալ կամ խռովայող ժողովուորը կը կարծէ թէ այս ընթացքով պիտի կրնայ հաստատուն պահել զհասարակապետութիւնը : Այսինչ այսօրուան օրս ի ներկայութեան զանազան անկարգութեանց , անիրաւութեանց և անպիտ արիւնահեղութեանց , հասարակապետութիւնը կորուսեալ կըհամարուի , ու զահալորոյս Վարդէն կայսեր առաջարկութեանը համաձայն ի թէ ժողովրդեան կամքը հարցուի ընդհանուր քուէարկութեամբ , աւարակցս չկայ որ կայսերութեան վերահաստատութիւնը պիտի ուզէ :

Ահա սակ Վարդէն Երբորդին բողոքադիրը զոր յուղարկած է ազգային երեսփոխանական ժողովոյն միջոցաւ ի Պարսէր :

Ի՞նչեւ զնախադաս :

Երբոր ամեն զաղղիւցիք խորին տխրութեան մէջ ինկած ի պատճառ ցաւալի պայմանաց հաշտութեան , միայն Հայրենաց դժբաղդութեանց վերայ կըխորհէին , ազգային ժողովը որոշեց թէ Վարդէնեան ցեղը կայսերական իշխանութիւն իրաւունքէն զրկեալ է և Քանադայի հաստատեց թէ ես միայն պատասխանատու եմ զաղղիւցող պատահած աղէտիցը : Երբ

նոր Սիօնի որդիք հայրենի Երկրիցոյն համար : Բայց պահ մի քան զուր և զաղար տաք քեզ , հիւրէ քա , հիւրէ ողբաւ իրեւ յոստահատ , կանգնիր , թօթալի ինչ միայն զիւրեք , կարգա զՏէր Աստուած քո , քաջալերեաց զբոլորդ . որ տառապեցոյ զքեզ , նոյն պիտի ողորմէ , զի ողորմութիւնք Տառն անպառն են և ոչ նուազին զթուլութիւնք նորա :

Այլ արդ , դատեալով ի ձեռ սիրովն Յիսուսի կաղաչմ կըյորդորեմ զձեզ ո՛ր թակից եղարք իմ , որ Աւետարանին պաշտօնեաց էք որ Վերստոսի հօտին հովիւ էք , որ եկեղեցոյ դերպատանին անտես էք , որ կենաց բանին քարոզ էք , որ աշխարհի լոյս էք , Աստուծոյ տան ճրագն էք , ժողովրդոց աղն էք , նոր Սիօնի Մարգարէ էք , Վաթիկի Երեմիայի ողով սիրեցէք Երկրիցոյն , վշտակից եղէք նորա խաչակրութեան մէջ , յոյս տուք , զարացուցէք լքեալ ձեռքեր , կի՛նուցեալ ծուկեր , թող համբերեն խալաւ , իսպառն մոտալուտ է , ալ լեւեմեր վախճան ունին , Հայք պիտի ասրին , և փրկուած են այսօր :

Վարդեցիք միմիայն բան , այլ և հաց . յուշ բերէք զթոճ Յիսուս նոթի ժողովրդոց հայ ալ բաշխեց հոգոյ կեանքին հետ , աշխատեցէք , զոգնաւորեցէք ժողովուրդ զեկս և շուրջ կեանքին , բարոյեցէք քաղաքացոց որ արհեստ սորվին , ընկերութիւններ կազմեն , շահաւոր ճառութեան հետեւին . քարոյեցէք զեղալուց , հայրենի հող սիրեն , ամուլ եղներ սիրեն , մաճ սիրեն , քրտիք շահարեք հողի վրայ թափեն , շարաշար պանդխտութեան չլինեն . քարոյեցէք առ հասարակ Երկրիցոյն սիրեն , զպրոց սիրեն , լոյս սիրեն , դատարարական սիրեն , զաղգ սիրեն , Հայրենիք սիրեն , Երկիրք սիրեն , Հայր սիրեն , նորա Արքայութիւն ինքեղեն և բաւական է :

Այս է քո փրկութիւն և կեանք , ժողովուրդ Հայոց , յանձն առնեմ զքեզ հիւան , նա հովուեցէ զքեզ և քեզ ինչ ոչ պահանջեց :

Կըրողքեմ այս անիրաւ և ապօրինաւոր որոշման դէմ , այն անիրաւ է , քանզի երբոր պատեւրաղը հրատարակուեցաւ , ազգային զայցումը որ չափազանց կերպիւ զրգուեալ էր իմ կամքէս անկախ պատճառներէ , ընդհանուր և անընդմիջաբերելի քարշում մի յառաջ բերած էր : Ապօրինաւոր է , վասնզի ազգային ժողովը որ կազմուած է հաշտութիւն ընելու մի միայն նպատակաւ , իւր իշխանութեան սահմանը անցաւ ուրոշելով այնպիսի խնդիրներ որոնք իւր ձեռնհասութեան վերէ վեր են . և երկարեղ իսկ թէ սահմանադիր ժողով մի ըլլար , անկարող պիտի լիներ իւր կամքը , ազգին կամաց անզը գնել : Այնչեւոյ օրինակը կապացուցանէ այս ըսածս . քանզի 1848ին սահմանադիր ժողովոյն թշնամութիւնը ձախորդ վախճան մի ունեցաւ Դեկտեմբեր Տասին ընտրութեան առջև . և 1851ին ժողովուրդը 7 միլիոնէն աւելի քուէով իրաւունք տուաւ ինձ ընդգէմ օրէնսդիր ժողովոյն :

Քաղաքային կիրքը չկրնար տիրել իրաւանց վերայ և զաղղիական հասարակային իրաւանց համեմատ օրինաւոր կառավարութիւն մի ուրիշ կերպիւ չկրնար հիմնադրուիլ բայց միայն ժողովրդական քուէարկութեամբ (բէպիտիթ) : Եւ այսպիսի քուէարկութեան դուրս յափշտակութիւն կայ ոմանց համար և ընդգիծութիւն ուրիշներուն համար : Ուստի պատրաստ եմ խոնարհելու առաջի ազատ յայտարարութեան ազգային կամաց . բայց անոր առջև միայն կըխանարհմ :

Ի ներկայութեան ցաւալի դէպքերուն որ անձնուրացութիւն և անհասարկութիւն կըհրամայեն ամենուն , կուզէի ապաքեն լուծելու պահել . բայց ազգային ժողովոյն որոշումը ստիպեց զիս բողոքելու յանուն թշնամանեալ ճշմարտութեան և յանուն ազգային իրաւանց զոր չեն ուղեր ճանաչիլ :

Փարիզի Իլլէ-Միլիտան կոչուած օրագրոյն մէջ հետեալը կըկարդամք .

« Պատմութիւնը անտարակոյս պիտի իմացնէ մեզ մեր աղէտալի թշուառութեանց ճշմարիտ պատճառները , երբոր զանոնք խաւարեցնող ժամանակին կիրքերէն ազատուին : Այս պատճառներէն պիտի հասկընամք թէ ինչպէս որ կայսերութեան ժամանակը , նոյնպէս և Սիպոնեքերին 4ին հաստատեալ հասարակապետական կառավարութեան ներքեւ , ամենամեծ յանցաւորը , նոյն իսկ ժողովուրդն է : Այս ժողովուրդը անպարտ հրատարակեց , արդարացոյց Վիկտորեքերը 2ին մարդը (զՎարդէն) , և իւր վեհապետը ըրաւ զնա . ժողովուրդը սնապարծ և մեծաբան , որ լի համարմամբ իւր վերայ միայն զինքը սքանչաց :

ՍՈՒՐԲ ՏԵՂԵՍՅ ԽՆԴԻՐԸ

(Շարունակութիւն) (1)

Հետեալ օրը դարձեալ ըստ առաջին սուր հրաւիրանաց սահմանեալ ժառանգներ կայաւորեալ Կատարիքներ ժողովին . Վալի փաշային և Միւնիսի Էֆենտիին հին էր նաև Կատարիքի Գաղղիական Պաշտպանը Զինի ստորական տեսութեանց հարցոյ վեմա . Միւնիսի Էֆենտի և ըսաւ . « Բաթրիք Էֆենտի . քանի որ այդքան ժամանակ նոյն շնորհքը վեհանախարար ըրած էք Լատինաց և զուր իսկ ըստ ձեր խոտորվածութեան ձեր պատրիարքութեան միջոցին վեց տարի ալ սիրով շարունակեալ էք , ի՞նչ բաց առեալ երկու տարի յառաջ Կատարիք փաշային օրովը սրտաւհած անցքերը ,) արդեօք կարելի չէ՞ որ դարձեալ նոյնը շարունակէք ընել , և սիրոյ կապը այդպիսի դժուարութեամբ չիւղէք » :

Արդէն ձեր մեծութեան երեկեան օրը պատմեցի մի ըստ միտք , և կարծեմ որ զլուրեղեալ ցաւեցաւ , արդեօք կ'ուզէք որ Պաշտպան Ներկայութեամբը նորոշե՞ք : Կաղաչեմ , քանի որ նուազաւոր զաղղիարէն չեմ գիտեր , դարձեալ ձեր մեծութիւնը պիտի թարգմանէ , ըստորում ուրիշ մարդ ալ չէք ընդունիր այս դատերու մէջ , ուստի կաղաչեմ զուր ձեզ ձեզին պատմեցէք Պաշտպանին երեկեան առաւ ձեր վեհութեան ըստմենքս , որ հարազատ հպատակի մը վրայ պարտք մը աւելցուցած կըլլաք : Այս միջոցին վեմա . Միւնիսի Էֆենտիին կարելի եղածին չափ հասկցոյց օր յառաջ սրբազան Պատրիարքին խօսածներն , և տեղ տեղ վստ . Վալի փաշային և կըյիշեցնէր նոյն Եֆենտիին վերաբերեալ տեղեկութիւններէն պակաս մնացածներն :

« Պաշտպանը կըխնդրէ , ըսաւ վեմա . Միւնիսի Էֆենտին , որ այս գործին սիրով վերջ մը տամք : Լա

(4) Տես լրագրոյս 902, 903 և 904 թիւերը :

ԱԶԳԱՅԻՆ

«Հոռի Պապը Փետրուար 13 ամսամբում հետեւալ նամակը գրած է առ գերա. Հասունեան. զոր Ս. Բ. Ե. քաղելով կը հրատարակեմք ի տեղեկութիւն մեր հետաւոր ընթերցողաց»

Պատուական եղբայր, ողջոյն և օրհն. առաքելական։ Այն խոր օրոտմութեան մէջ՝ զոր կը պատճառէ մեզ այդ մարդոց գլուխ քաշելը, որք իրարար ձեր և մեր իշխանութիւնն արհամարհելով՝ անազորոյն վերք մը կուտան իրենցնոյ և շատ հոգիներու կորուստ կը պատճառեն, մեծապէս կը մտնի արեւինը այն սիրով և բարի պաշտամբով որով զուր և ձեր իշխանութեան հետզան. զուր կաթմակներն միշտ կը շարժուին զմեզ։ Վայ ա. նոնց որ այդպէս իրենց մայրը կը տանջեն մանաւանդ այն պիտի ժամանակ մը՝ ուր իր թշնամիներն ամեն կողմէ իր վրայ կը յարձակին։ Ինչի՞նչ է այս սոսկալի տանկումը, յոթեան մէջ որ աստուածային Նախախնամութեան զաղանի մէկ խուհրդովը կը կատարուի, ճանաչեն զայն որ իրենց համար ըստ։ «Ասից զճեմանոյն ի ձեռն և սրբեցից զիւրն, ժողովեցից զցորեանն ի շտեմարան և զյարգն այրեցից անշնչ հրով»։ Ինչի՞նչ է զոգտով մտածելն այս սարսափելի առակին վրայ, և իրենց սպառնացող պատուհասը վրանուն հեռացնելն։

Բայց որչափ որ հատուցելոյ վիճակն աւելի դժբ. դակ և դժուարին կը լինէ, հակառակորդաց յանգնութեան և վատթարութեան երևոյն, իրենց անդողող յարատեւութիւնն առաւել նշանաւոր է, և օրինաւոր իշխանութեան անեցած հետզանդութիւնն և կաթմ. լիկ միտքեան յարումնին առաւել պատուական է։ Ուստի մեծ գոհութեամբ ընդունեցինք ձեր անձնանութիւնութեան սիրալի պաշտոյնները, և անհրաժեշտ եմք որ նոյն պէս շատ հաճոյ պիտի լինին մեր երկնաւոր Տիրոջ որ ուղեց զի իր ամեն աշակերտները մի լինին։ Յուսացինք որ ձեր որդիական սիրոյ, բարի ծառայութեանց փոխարէն կը յաճի վերջապէս հերձուածողաց միտքը լուսաւորել, անոնց ըմբոստ կամքը խոտորակեցնել և կորուսելը բաղձալի դարձալը ձեր սիրտն ուրախացնել։

Այս օգնութիւնը Նախախնամ պաշտամբ և միարան աղօթքով որ անոր աստուածային ողորմութիւնը բռնաբարէ։ Այս կը ինքզինք մեր ալ իր ինչ ամեն բանէ ստաջ և ի բոլոր սրտէ ձեզ համար, պատուական եղբայր, և ձեզ հնարանող հաւատացելոյ համար, երկնից ամեն օգնութիւններն ու պարգեւները հայցելով ձեր վերայ։ Թող անոր մէկ նշանը լինի այս առաքելական օրհն.

Պ. Հիւսպատոս, կրկնից Ս. Պատրիարքը, Բաբին տնտեսութիւնն ինչ յայտնապէս ֆեւս չունի. վասնզի Հայոց ազգը իրեն համար Պապ ունի, ուրիշ Պապի կաթմ չէ. այլ կը հարցնենք ձեր մեծութեան, ինչու Պապ զիւր կայրը չընդունեց անոր տնտեսութիւնն, ինչու նոյն ժողովքին հակելու համար յատուկ մարդ խրկեց. աւելի զարմանալին ըսեմ, մեր մեծազօր օսմանեան տէրութիւնն ինչու համար ի լուր աշխարհի բողոքից անոր տնտեսութեան գէմ և չընդունեց զայն, մանաւանդ որ ինքն Մատթէական ըլլալով՝ երբեք անկից կախում չունէր, ինչու բրաւ, ի հարկէ այդ տնտեսութեան խնդրոյն տակ քաղաքական գաղտնիք մի նշմարեց։ Բայց Բաբին նպատակը ինչ էր ուրեմն անխաղ ըլլալու համար այնքան աճապարէ՛լ աշխարհափողով ընել. և ինչէն ստիպուեցաւ Հոռիմայի եկեղեցիէն զուրս եղած բոլոր քրիստոնէից եկեղեցիներն անիծելու և նոյնից, և անոնց անմեղ ժողովուրդները, և միանգամայն սուրբ եկեղեցիներն հիւժուածող և հերետիկոս անուանելու և ինչ հարկ կայ ուրեմն նոյն անիծուած և նոյնուած, մէկ խօսքով՝ հերետիկոս կոչուած եկեղեցիներ գալու և պատարագելու համար այսքան իրար անցումներ ընել և մեր բարեխնամ Տէրութեան պատուական գլուխը յայտնել։ Կը հարցնեմ ձեզ, Պ. Հիւսպատոս, արդեօք այս շարժման տակը գարձալ գաղտնիք մը չկայ, մեզ Հայոց համար վտանգ մը չըլլալուն կրնա՞ք երաշխաւորել, թէ պէտէ տեսնեն անցաւ երաշխաւորելու, վասնզի Լատին իրենց վարմունքովը ամեն բան յայտնեցին, անոնց միտքը իմանալու համար աշխատանք չթողուցին մեզի։

Վսեմա. Վալի փաշան և Միւնիսթէֆէնտին սրբազան Պատրիարքին այս ըսածները միւստմիջէ Պ. Հիւսպատոսին թարմանել զինի, իրենք ալ իրենց կողմէ և երբեմն Պ. Հիւսպատոսին ըսածներն ալ Նորին Սրբաշնութեան կիմայնէին, սա մտքով թէ՛ եթէ կարելի է, այս գործին վերջ տրուի երկու ազգաց մէջ սէր և խաղաղութիւնը նորէն հաստատուելով։

ման արժանի կը համարէր. հետեւաբար ամեն բանի մէջ յառաջնութեան և դերադաշնութեան աստիճանը իրեն միայն կուտար։ Պատերազմին գալոյն մէջ ան. յաղթելի կը համարէր զինքը, խելացի, ամենախելացի, ջաշ լուսափայլ, փարոս, արեւիկ, աշխարհիս առաջին ժողովուրդը կը կարծէր զինքը, սակայն ամեն ինչ տեղեկութիւն չունէր իւր գրացի ազգաց յատկութեցը վերայ և հետեւութեամբ կը սնանէր լրացրաց անհիմն հրատարակութիւններով, որոնք շահասիրութեան նպատակաւ յատկապէս գրուած էին ժողովրդեան ախորժակը, տկարութիւնը և անոր աղիտութիւնը զըզուելու համար։

«Եւ յիշուի որչափ սնուի խօսքեր և աղճատանք վերջին ժամանակները այս լրացիւնները չկընցուցին անոր» մէկ կողմ թող տալով առաջին ժամանակները։ Պատերազմի ժողովուրդը ի Պէրլին պիտի երթար յերկուս ժամանակս. արդեօք երբեք շարաթ պէտք էին, ոչ, տասնըհինգ օր բաւական էր։ Վերամանային իւր դժբաղդ ճակատադրութեամբը արդէն կանխապէս յաղթուած էր. մանաւանդ որ երկար ժամանակ չկրնար քաղել, ինչու որ իւր օտքերը ապօրինի են։ Վերջապէս լրացիւնները այսօր մէկ բան վաղը ուրիշ բան մի կը դառնան զգեցմանային պարտաւ լու համար։ Եւ շատ մօտեցանք իւր ապականեալ բարոյքը անկարողութեան մէջ կը դառնուի. յիշապէս իրենք երեւան ելած է Մուսիքի մէջ. պաշտօնայինները և բոլոր սխալները իրարու հետ կատաղաբար կուռելու կէտին մէջ կը դառնան, Լուկեթի իշխանը սպանուեցաւ, յորէտէրէր՝ Գորը իշխանը կաշնաւոր եղաւ, Վիլլամ թագաւորը խեղդեցաւ, Լայոն խեղդ մը կար, բայց թէ՛ էր, աւա՜ղ խեղդը դու էիր, դժբաղդ գաղղիացի ժողովուրդ։

«Վերջապէս ճանաչէնք մեր յայտնաբեր, և անոնց անազորոյն պատիժը տեսնելով՝ աշխատինք կատարելապէս կարգաւ սովորելու որպէսզի հասկնանք մեր կարգադրածը։ Իսաական չէ մեր գրօշակին վերայ գրելու Լեզաւորութիւն, Հաւատարմութիւն և Եղբայրութիւն. պէտք է իմանանք թէ ինչ կը նշանակեն այս բառերը։ Եւ որովհետեւ կերեթ թէ տակաւին ըստ արձանային չեմք զիտեր անոնց նշանակութիւնը, ժամանակը հասած ու անցած իսկ է որ յիշեալ երեք բառից անդը ուրիշ բառեր գնեմք և այս նոր նշանները գործածեմք որ ամենուն ալ կատարելապէս դիւրեմանալի է. այս. ինքն իստատարակութիւն և Լեզաւորութիւն»։

տիքը դարձեալ շարունակեն իրենց սովորութիւնը, և ևս սաստիկ պատուելի կուտամ՝ երբեք կարգէ դուրս բան մը չընելու ձեր իրաւանց զէմ, նորանոր բաներ աւելցնելով ընդզէմ սովորութեան»։

Մեծապէս շնորհակալ եմ Պ. Հիւսպատոս, ձեր բարեօրոտութեան, ըսաւ Ս. Պատրիարքը, որ սուրբ եկեղեցոյ պաշտօնականներն, որոնք խաղաղութեան օրինակ ըլլալ պարտաւոր են, միշտ զուր գնտա ի խաղաղութիւն կրկնէք. այլ խաղաղութիւն և սէրն միշտ երկու կողմէն պէտք է հաւասարակիւ ըլլայ. վասնզի որ սիրուի և ոչ սիրէ, բռնաւոր է այնպիսին, և որ սիրէ, և ոչ սիրուի, նահատակ է այնպիսին։ Ս. Հայոց պարտաւորութիւնն էր, որ զիս կը պարտաւորէր, ոչ թէ միայն սիրով եղած ժամանակին, այլ անոնցմէ մեզի թշնամութիւնն անձրիկ պէս անհրաժեշտ ժամանակն անգամ, ինչպէս յառաջադրոյն պատմածներէս ալ կրնաք մակարեւել։ Եւ ինչ ըրած էին իմ նախորդներս ալ, զնոյն և ևս գործով յոյց տուի իմ այս վեց տարի պատրիարքութեան միջոցին՝ անոնց օրինակին հետեւելով, և համբերեցի անոնց յանկուտ ըրած գրկողութեանց, բայց ա. նոր փոխարէն միշտ ցաւ և խռովութիւն յարուցած են մեզ. ուրեմն ինչպէս կարելի է, այսպէս յայտնի թշնամի մը, որուն այսօր բոլոր թշնամութիւնն և ըրած շարքներն արիւ պէս յայտնուեցաւ, կրկին անգամ թող տամ որ զայ իմ սեպհական եկեղեցոյ մէջ զիս նախաւ, զիս պալատէ, և իմ անխաղ և անմահ Սրբոյն նախորդ սուրբ անշնային վրայ, սխալական և մահկանայն մարդը անխաղ բարոյէ, ևս զնոյն իմ աշխարհային ըսեմ ի գոյթակողութիւն համայն ազգայնոց։

Պ. Հիւսպատոսը պատասխանեց. «Բաբին անխաղութիւնն ձեզ ամենին ֆեւս մը չունի, եթէ ֆեւս մը կայ՝ մեղի է, մենք պէտք է մոտենանք և պատասխանեմք կամ բողոքեմք. ինչ կը լայ տարին մի անգամ ձեր եկեղեցին պատարագ ընելով, մանաւանդ որ այսքան ատեն շարունակ ըրած են և իրաւունք ստացած»։

նախկինը զոր ս'րով կը շնորհակալ ձեզ իբրեւ զրաւական մեր յատուկ բարեկամութեան առ ձեզ, առ կըլեյր և առ հաւատացեալ ժողովուրդն, յանձնաւոր խնամոյ ձերոյ։ Տուեալ ի Հոռի, առ թիւր Ս. Պետրոսի, 13 Փետր.

Ի քսանհինգերորդում ամի քահանայապետութեան մերոյ։
ՊԻՍՍ Թ. ՊՍՊ

Կ. Պօլսոյ Հակահաստնեան կաթողիկէ Հայ ժողովրդեան ազգային երեսփոխանական ժողովը անցեալ շաբթու կազմուեցաւ. որուն աշխարհական անդամոց մէջ հաճութեամբ սրտի կը տեսնեմք յիշեալ ժողովրդեան գլխաւորները և հարուստները. հետեւաբար տարակոյս չկայ թէ մեր համազգի եղբայր հասարակաց գործերը յաջողութեամբ պիտի յառաջադնեն։ Վասնզի՝ ըստ մեզ, առանց գործակցութեան ժողովրդեան մի գլխաւորաց, դժուարին է յոյժ որ նոյն ժողովրդեան ազգային վարչութիւնը յաջող և բարեկարգ ընթացք մի ունենայ. և այս ամենապարզ պատճառաւ մի որ՝ առանց դրամոյ բան մի չկրնար առջև երթալ։

Կահաւորի քուէից առաւելութեամբ ընտրուած և կեղեցական և աշխարհական ազգային երեսփոխանաց անուանքը, զորս կը նշանակեմք ըստ կարգի առաւելութեան քուէից։

Եկեղեցական երեսփոխանք։	
Եւսեփէ Զեան Գրիգոր վարդապետ	499
Իւրէի Եւան Զովսէփ	424
Պոյնուէրեան Հ. Պօլսոյ	415
Սարեան Հ. Ստեփաննոս	379
Դաւթեան Սերովսէ	303
Օրմանեան Հ. Մարգարիտ	343
Մարգարեան Հ. Մովսէս	334
Սիւանեան Հ. Լեւոնեան	263
Պարոնեան Հ. Սիւրբա	249
Թեոդոսեան Հ. Լեւոն	246
Միսէրեան Հ. Ստեփան	242
Մարգարեան Հ. Հովհաննէս	233
Աշխարհական երեսփոխանք։	
Սարգիս Զովհաննէս Եփէնտի	505
Համիշ Զովհաննէս	501
Տառա Զովսէփ	496
Կեօնեան Զովսէփ	492
Շիւմանեան Զովսէփ Եփէնտի՝ ատենապետ	439
Խիւսեան Պէյ Տիւրքեան	475
Կիւրեղեան Զովհաննէս	475

Պատասխանեց Ս. Պատրիարքը. «Պ. Հիւսպատոս ձեր այս առաջարկածը քրիստոնէական պարտաւորութիւն մ'է, զայն ես արդէն գիտեմ, և գիտնալուս համար էր որ այս վեց տարի պատրիարքութեան չընանին մէջ այսքան վշտաց և զրկողութեան համբերեցի, բայց մեր քրիստոնէաբար համբերութիւնն ձեր կարգաւորաց տակ իսկ տուին կարծեց թէ՛ մենք իրենցմէ կըլլան նախ, քան լիցի՝ երբեք վախ մը չունեմք մեծազօր Տէրութեան շնորհիւ, որ զիտէ արդարապէս հակել իւր հարազատ հպատակաց իրաւանց վրայ»։

Ժողովին արձակման ժամանակը մօտ էր երբ վսեմա. Վալի փաշան ոտք ելալով ըսաւ. «Բաթրիք տօտտու մուշ, եւրոնքի կիւն պաշկայ պաղըւսադ իշիւրիւ վար. լարին պաղաւրմ եւրոն աղաւմը օլուր՝ եւրոն օպիր կիւն միւ օլուր, խապար վերիւր, պոյուրուպ կիւնիւր վէ պու իշիւր վէ պու իշիւր վէ պու իշիւր»։

Երբ կը պատրաստուէին մեկնելու, Պ. Հիւսպատոսը դարձաւ ըսաւ վսեմա. Միւնիսթէֆէնտին. «Կը խնդրեմ ըսէք Հայոց Պատրիարք մեր բարեկամին որ ներողամիտ ըլլայ՝ մինչև ցարդ իրեն տեսութեան չգնալուս. կը խափաղեմ երթալ տեսնուիլ, ինչպէս որ պարտաւորութիւնս ալ է»։

Ձեր գալն յառաջ մենք պարտաւոր էինք, Պ. Հիւսպատոս, ըսաւ սրբազան Պատրիարքը ձեր բարի գալուստը շնորհաւորելու գալ. մանաւանդ ձեր սուրբ Երուսաղէմ մտնելու օրը անգամ պարտաւոր էի թարգման և ետաւաքսման ձեզ զիմաւորելու խրկելու, եթէ Լատինաց վանքէն կամ սուրբ Երուսաղէմի Պաղղիական Պ. Հիւսպատոսի կողմէն մեզ լուր տրուած ըլլար, որ վսեմ ձեր ներողամտութիւնն կը խնդրեմ յայտնելով ձեր վսեմութեան միշտ պատրաստ եմք զձեզ պատուելու ըստ կարեաց, վասնզի՝ այլ է քաղաքականապէս տեսակցիլ պատուել և պատուել, այլ է սեպհական իրաւանց վրայ խօսակցիլ և նորա համար դատ վարել։

(Պիտի շարունակուի։)

